քում պատահած լինի այդպիսի դէպք, բայց կարելի է հաստատ ասել, որ այդպիսի սոսկալի գործողութիւն կատարելուց առաջ մայրը կորցրած պէտք է լինի հոգեկան կարողութիւնը։ Միմիայն խելագար մայրը կարող է իւր ձեռքով սպանել իւր զաւակին. այն էլ տնտեսական պատճառներից դրդուած։ Ասանց այս չափազանցութեան՝ «նորածին մանուկը» աղքատ դասակարգի իրական ու կենդանի պատկերն է ներկայացնում և ցոյց է տալիս հեղինակի սուր դիտողութիւնն ու ժողովրդի կեանքին մօտ ծանօթ լինելը։ Գրքոյկը կարդացւում է հետաքրքրութեամբ. լեզուն պարզ ու ողորկ է։

ԲՐԻՉ

---

5. ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ «Հայ հեղինակներ», ընտիր հատուածներ, միջնակարգ դպրոցների համար։ Թիֆլիս, 1905 թ.

—

Գ. Վանցեանի այս աշխատութիւնը գալիս է լրացնելու մեր դպրոցական ձեռնարկների մէջ մի շատ խոշոր բաց։ Մինչև այժմ կազմուած այդ տեսակի ընտիր հատուածների ժողովածուներից և ոչ մէկը չի համապատասխանում իւր նշանակութեանը։ Կազմողները մեծ մասամբ եղել են կամ հայ գրականութեանը ոչ բաւականաչափ ծանօթ անձինք կամ անճաշակ կամ միակողմանի և կուսակցական հայեացքների տէր։

Գ. Վանցեանը աշխատել է լինել բազմակողմանի և անկախ որ և է բնաղբօսիկ տենդենցիայից և այս կարելի է ասել յաջողուել է նրան։ Նրա գիրքը, որ բաղկացած է 262 մեծադիր էջերից, պարունակում է հատուածներ ռուսահայ գրեթէ բոլոր հայ հեղինակներից, սկսած ամենայայտնիներից մինչև անյայտները։ Կան հատուածներ և տաճկահայ գրողների գրուածներից։

Յայտնի գրողների հատուածներին կցած են և՛ նրանց կենսագրութիւնները, սակայն շատ համառօտ և՛ թերի։ Երևում է, որ կազմողը մի փոքր շտապ է գործել։ Պէտք է յուսալ, որ միւս հատորները, նաև ներկայ հատորի երկրորդ տպագրութիւնը կը լինեն աւելի լիակատար։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

—

Գրիգոր Վանցեան. Հայ հեղինակներ. ընտիր հատուածներ միջ-

նակարգ դպրոցների համար. Թիֆլիս 1905. (1 ռ.)

Ցարութիւն Թումանեան. Համառօտ ստուգաբանութիւն Հայոց լեզուի, 1905. (40 կ.)

Նար-Դոս. Նորածին մանուկը. Վաղարշապատ 1904. (3 կ.)

Ղազար Փարպեցու Հայոց պատմութիւնը և Վահան Մամիկոնեանին գրած թուղթը. թարգմանեց Մինաս քահ. Տէր-Պետրոսեանց. Ալէքսանդրապոլ 1895. (80 կ.)

Արիստակէս Լաստիվերտցի վարդապետի Հայոց պատմութիւնը. թարգմանութիւն նոյն Մինաս քահանայի. Ալէքսանդրապոլ 1893 (60 կ.)

Ա. Մարգար. Երախտիք. պատմուածք. Բագու 1904. (10 կ.)

Սէյլան. Հայթա ֆիրատ. ժը. դարի սկզբներից մի անցք. Թիֆլիս 1904 (35 կ.)

Ղազ. քահ. Յովսէփեան. Ակնարկներ Ուտիացի և մահմեդական Հայերի մասին. Թիֆլիս 1904 (40 կ.)

Մեր էժանագին գրադարանը. Հրատ տիկին Զաբէլի. № 4. Մեծ տօն. Բ. Պէնկօի. ս. Պ. Բ. 1905 (10 կ.)

—№ 5. Նոր լոյս. Գ. ք. Պետրովի. Ս. Պ. Բ. 1905. (10 կ.).

Հայկ Տէր-Աստուածատրեանց. բառարան Հայ կենսագրութեանց (հայագէտներով) 1441—1904. Ա. Պրակ առաջին. 45 պատկերով. Թիֆլիս. 1904 (70 կ.)

Սիրու երգիչ. Նահապետ Քուչակի երգերը. մշակեց Գէորգ Ասատուր. Թիֆլիս 1905 (40 կ.).